



ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՌԻ ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ

Բառապաշարը որպես համակարգ, բառիմաստային տարբեր խմբերի, իմաստային տարբեր դաշտերի մի ամբողջություն է: Այդպիսի մի խումբ է գույն նշանակող բառերի համակարգը:

Գունանունների վերլուծությունը կարևոր է ոչ միայն իմաստաբանության և հատկապես կառուցվածքային իմաստաբանության համար, այլև տվյալ ժողովրդի, տվյալ հանրության աշխարհաճանաչողության և աշխարհընկալման առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից:

Հայերենի գունանուններին մվիրված հատուկ ուսումնասիրություններ չկան, մի քանի գունանուններ ստուգաբանվում են լեզվաբանական զանազան աշխատություններում:

Լ. Ա. Սարաջևան ուսումնասիրում է գրաբարյան և հինսլավոնական լեզուների ծագման և ստուգաբանության որոշ հարցեր՝ գուգահեռներ անցկացնելով երկու լեզուների որոշ գունային անվանումների միջև¹:

Հայերենի և ցեղակից լեզուների բառային միավորների առանձին թեմատիկ խմբերով հետևողական համադրում է կատարում Գ. Բ. Ջահուկյանը²:

Հայերենի արմատական գունանունների իմաստային տարբերակման և ստուգաբանության նպատակ է հետապնդում Ս. Ա. Գրիգորյանի աշխատանքը³:

Ղարաքաղի բարբառի գունանունների ուսումնասիրությունը գրական հայերենի գունանունների հետ ունեցած առնչությունների, նաև արցախահայության աշխարհընկալման և լեզվամտածողության որոշ կող-

մերի բացահայտման նպատակ ունի:

Ըստ կազմության՝ Ղարաքաղի բարբառի գունանունները լինում են արմատական, ածանցավոր և բաղադրյալ: Գրական հայերենի արմատական գունանունները հնչյունական որոշ փոփոխություններով և նույն իմաստային երանգներով գործ են ածվում Ղարաքաղի բարբառում *սպիտակ/սիպտակ*, *սև/սը՛վ*, *կարմիր/վ՛արմիր/վ՛արմիր*, *կապույտ/վ՛պպուտ*, *կանաչ/կանանչ*, *թուխ/թօխ*, *մուգ/մօք*, *բոզ/բօզ*, *բաց/պէց/պօց*, *զըմրուխտ/զ՛ումբրիտ*, *երանգ/(ը)ռանգ՛*, *գառ/զօռ*, *ալ/ալա*: Իմաստային առումով որոշակի վերապահություն կարելի է անել *զօռ* բառի վերաբերյալ, որը գրական հայերենի բոլոր բառարաններում ներկայացվում է ոսկեթել, ոսկեթել գործվածք, ոսկի իմաստներով: Ղարաքաղի բարբառում փոխանունության հիման վրա այն դարձել է նաև գունանուն և նշանակում է դեղին, ոսկեգույն (*Զօռ մազ՛էր օնէ*):

Պարզ կազմություն ունեն նաև բարբառի *արի*, *թալա*, *թօռ*, *չալ*, *ճաղար* և այլ գունանուններ: Ածանցավոր գունանուններ են կերտում *-ավում*, *-օլ*, *-էնէ*, *-ի/է*, *-էզ՛իզ՛*, *-էն*, *-վաչի*, *-վի*, *-բէր* ածանցները: Ինչպես գրական հայերենում, այնպես էլ Ղարաքաղի բարբառում, *-ավում* ածանցը, միանալով պարզ կազմություն ունեցող գունանուններին, կազմում է նոր գունանուններ՝ նրանց հաղորդելով մվազական երանգ սիպտրկավում, տիղնավում, կրճընչավում: Իմաստային և բառակազմական նույն արժեքն ունի նաև բարբառային *-էնէ* ածանցը՝ *սիպտրկէնէ*, *կրճընչէնէ*: Այս ա-

¹ Տե՛ս **Ա. Ա. Сараджева**, Сравнительно-типологическое исследование цветowych обозначений в древнеармянском и старославянском языках, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 186-199:

² Տե՛ս **Գ. Բ. Джаукян, А. А. Сараджева, Ц. Р. Арутюнян**, Очерки по сравнительной лексикологии, Եր., 1983:

³ Տե՛ս **Ս. Ա. Գրիգորյան**, Հայերենի արմատական գունանունները, նրանց իմաստային տարբերակումն ու ստուգաբանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, №2, էջ 188-193:

ծանցը կարող է ավելանալ և կրկնավոր բարդությունների՝ *թուխթուխէճէ, սրվարվէճէ*: Բացի գունանուններից, այս ածանցը կերտում է նաև այլ ածականներ՝ *բիզիթէճէ, խորդէճէ*: *Ի՛է-ն* գունանուններ է կազմում գոյականներից՝ *կաղաղ-կըղաղէ, մընէշնկ-մընըշնկի, մօխէր-մուխրի, ճուղուպուր-ճըղապըրի*: Ե՛վ գոյականներից, և՛ գունանուններից նոր գունանուններ է կերտում *էգ՛իգ՛ ածանցը ճօնէգ՛, չըմըլօտէգ՛/չըմըլօտիգ՛*: Գրական հայերենի *-ուկ* և *-ին* ածանցների հնչյունափոխված ձևերն են *-օկ* և *-էն*, որոնցից բարբառում ունենք *Վ՛իրմիրծի, տէղէն, սրվըմրթէն* (վերջինս բարդ ածանցավոր է): *-Վաչի* ածանցին հանդիպում ենք ինչպես գունանունների, այնպես էլ այլ խոսքիմասային արժեք ունեցող բաների կազմում *սիպտըկվաչի, սրվըվաչի, կընընչվաչի* (գունանուններ), *մըրթըվաչի, իշըվաչի, տուլըշվաչի* (մակբայներ): *Մորթ* բառից *-օց* ածանցով կազմված գունանուն է *մըրթօց* բառը, որը նշանակում է կանաչ: Ունենք նաև *կանանչ մըրթօց* նույն իմաստով, և դրա համաբանությամբ առաջացած *սը՛վ/մըրթօց* (շատ սև) գունանունը: *-Վի* ածանցը ուսերեն *օժ+սծ* ձևությների հնչյունափոխված ձև է, և հանդիպում ենք ուսերենից փոխառված գունանուններում *վիշնյովի, կարէշնըվի, կաշտանըվի, ոըծի*: *Բէղ-* նախածանցը ևս փոխառյալ է (պրս. *bi*), որպես գունանուն կերտող ածանց՝ այն հանդես է գալիս *բէղոանգ՛* բառում:

Ղարաբաղի բարբառը ունի և՛ համադրական, և՛ վերլուծական կազմություն ունեցող բաղադրյալ գունանուններ:

Հետաքրքրական է, որ վերլուծական կազմություն ունեցող գունանունների մեծագույն մասը ոճական առումով ավելադրություններ են. բարդության երկու բաղադրիչներն էլ արտահայտում են նույն իմաստը (առաջինը՝ ուղղակիորեն, երկրորդը՝ փոխաբերաբար), երկուսը միասին՝ իմաստի սաստիկացում, օրինակ՝ *Վ՛նպիտ լէղակ, սիպտակ ճիրաճ՛, կանանչ մըրթօց, սը՛վ մըրթօց, սը՛վ նօթ, սը՛վ խընճուղակօթխանճօղ, սը՛վ սիրէկ, տէղէն ճիրաճ՛, տէղէն խօնգ, սիպտակ փըրփօր, սիպտակ պիմբըկքօլա, պարգ՛-ք՛ահարբար*: *Զիզիբիզի* և *Վ՛նի-Վ՛նպիտ* բառերը վերլուծական կրկնավոր բարդություններ են:

Համադրական բարդությունների մեջ առանձնանում են երկու գունանուններից կազմվածները, որոնք իմաստային առումով այդ երկու գույների խառնուրդ ներկայացնող գույն են նշում՝ *սրվըվ՛/արմար, տըղ-ըրկանանչ, սրվըվ՛/նպիտ, սրվըթօխ*: Վերջին երկու գունանունները ունեն սուբյեկտիվ իմաստ, գործածվում են միայն անձքներում. *սրվըթօխ/սրվըվ՛/նպիտ մընաս* նշանակում է անհծվես, *սրվըթօխ/սրվըվ՛/նպիտ շօրվ՛էնաս*՝ սգի մեջ լինես:

Բարբառը ունի նաև իսկական (*շարմաղ, շահմար*) և կցական (*ծննարուն, սրվըվ՛/արի, մուխըռունգ՛ի*) բարդություններ կալացնող գունանուններ:

Ղարաբաղի բարբառի գունանունները ունեն նաև բառիմաստային մի շարք առանձնահատկություններ:

Թե՛ գրական հայերենի, թե՛ այլ լեզուների ընձեռած փաստերը վկայում են, որ կան որոշակի առարկաների հատկացված գունանուններ: Այսպես, ըստ Լ. Հովհաննիսյանի՝ իրանական լեզուներից փոխառյալ *աշխետ, երաշխ, գարտակ, ճարտակ, ճերմակ* բառերը հենց փոխառվել են որպես ձիու գույն արտահայտող բառեր: «Ավելին, կարելի է ենթադրել, որ հայերենի՝ իրանական լեզուներից փոխառյալ բոլոր գունանունները սկզբնապես վերաբերել են կոնկրետ առարկայի»⁴:

Կոնկրետ առարկաների հատկացված գունանուններ կան նաև Ղարաբաղի բարբառում: *Վ՛ած* և *ոըծի* բառերը՝ շեկ իմաստով, վերաբերում են միայն մազերին, *ճաղար, չախկալ* բառերը խած, կապտականաչավուն իմաստով, միայն աչքերի գույն են նշում, *սրվըվ՛/արի* նշանակում է սև և վատորակ հաց, *շահմարը՛*՝ կարմիր նշանակությամբ, օձերի գունանուն է, *ալա-ն* գործածվում է կովի և եզի կարմիր գույնը նշելու համար, *չալ-ը* վերաբերում է մորթու պուտ-պուտ, խատուտիկ և աչքերի կապտականաչ լինելուն, *հայու ոճնգ՛/նվ* գունանունը վերաբերում է միայն մաշկի գույնին և նշանակում է ցորնագույն: *Բօզ* բառը, ինչպես գրական հայերենում, բարբառում ևս նշանակում է անբարոյական, սակայն այն նաև գունանուն է և ունի մի քանի իմաստներ՝ 1. *գորշ, մոխրագույն*, 2. ընդհանրապես *բաց գույն՛ բօզ Վ՛արմար*, 3.

⁴ Լ. Օ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 109: 191

սպիտակավուն: Վերջին իմաստով բառը գործածական է միայն խմորեղենի սպիտակավուն լինելը նշելիս: Լ. Ա. Սարաջևայի կարծիքով հնդեվրոպական *pel* արմատից՝ նշանակված գորշ գույնի երանգների համար, տարբեր լեզուներում առաջացել են *սպիտակ, գորշագույն, դեղին* և այլ գունանուններ: Հնարավոր է, որ այդ երևույթի արտահայտությունն է նաև Ղարաբաղի բարբառում *բօզ* բառի նշված իմաստներ ունենալը:

Բօզ բառի նման բարբառում կան մի քանի բառեր, որոնք, բացի գունանուն նշելուց, ունեն նաև այլ իմաստներ. *սարխօշ* (գործածական է միայն Ղարաբաղի բարբառում)՝ 1. շիկավուն, 2. զվարթ, կատարը տաքացած, *ալարույա՝* 1. սև-սպիտակ, խալտարդետ, 2. տարօրինակ, կասկածելի (երկրորդ իմաստը առաջացել է փոխաբերությամբ և բարբառում ավելի իշխող է), *զարդա՝* 1. դեղին, ոսկեգույն, 2. ցորենի տեսակ, 3. գեղեցիկ, *կընըշկ'արմուր՝* 1. գույնըզգույն, 2. փխբ. ծիածան, որից էլ *կընըշկ'արմուր կապել՝* 1. ծիածան դուրս գալ, 2. ամուսնանալ:

Հնդեվրոպաբանության մեջ հայտնի է այն երևույթը, երբ համապատասխան արմատից ծագած գունանունները տարբեր ժողովուրդների շրջանում ունեն տարբեր նշանակություններ: Բացի այդ, որևէ լեզվի զարգացման տարբեր և նույնիսկ միևնույն շրջանում տվյալ բառը կարող է նշանակել տարբեր գունանուններ: Այսպես, հին հայերենում *ծիրանի* նշանակում է՝ 1. վառ կարմիր, 2. շառագույն, 3. երկնագույն: Այդ երևույթը նկատելի է նաև Ղարաբաղի բարբառում. *թառ* նշանակում է՝ 1. երկնագույն, 2. մուգ կապույտ: Իսկ Նոր Բայազետի բարբառում *թառ* նշանակում է անքիծ սպիտակ, շատ սպիտակ, կա նաև *թձտ սպիտակ* կապակցությունը՝ բոլորովին սպիտակ նշանակությամբ⁶:

Չորեկի/չորհեկի նշանակում է սրճագույն, վառ դարչնագույն, իսկ *կ'արմուր չորհեկի* կապակցությունը՝ վառ կարմիր: Գործածական է նաև *կահվա* (թրք. սուրճ) *չորեկի* (դարձյալ սրճագույն իմաստով) գունանունը, որ Աղբուլաղի խոսվածքում ժո-

ղովորական ստուգաբանությամբ շփոթվել է *դախապ* (պոռնիկ, անբարոյական) բառի հետ և ստացել *դախապ չորեկի* ձևը, որը այլ խոսվածքներում նշանակում է վառ կարմիր: **Չալ** բառը կապտականաչավուն իմաստով գործածական է՝ որպես աչքերի գունանուն, խատուտիկ իմաստով վերաբերում է մորթուն, իսկ նրանից կազմված *չըլէլ* բառը նշանակում է 1. հասունանալ, 2. կարմրել (միայն պտուղների և բանջարեղենի մասին), 3. սպիտակել (մազերի մասին):

Ղարաբաղի բարբառի որոշ գունանուններ ունեն դարձվածի արժեք՝ *ծուրն և արուրն ուրուր նըհը՝տ խառնածկաբըն և արուրն ուրուր խառնած* (վարդագույն):

Ըստ ծագման՝ բարբառի գունանունները կարող են լինել բնիկ, փոխառյալ և անհայտ ծագման:

Հնդեվրոպական ծագում ունեն *տէղէն, մըթէն, մօք, բօխ* բառերը: Իրանական փոխառություններ են (*ը*)*ոանգ՝, կ'անուտ, կ'արմուր, սիպտակ, սը՛վ, մըրտօց, չալ, զձտ, զուսրնուտ, շահմար, խակի, ալա* գունանունները: Ռուսերենից են փոխառվել *ռըծի, վիշ նյօվի, կարէշըզվի, կաշտանըզի, արանճըզի, կօֆէ սը մալակօս* գունանունները: Վերջինս նորաբանություն է և գործածական է միայն նոր սերնդի խոսվածքում: Այդ է վկայում նաև *ֆ հնչյունի* առկայությունը, որը խորթ է Ղարաբաղի բարբառին: Ռուսերենի միջոցով բարբառին են անցել *ֆրանսերեն բօրթօ, արանճըզի* գունանունները:

Հենմվելով տարբեր լեզվաբանների ընձեռած փաստերի ու ստուգաբանությունների վրա՝ Ա. Ա. Գրիգորյանը տալիս է *դեղին/տեղէն, երանգ/ըրտանգ՝, կապույտ/կ'անուտ, կանաչ/կանանչ, կարմիր/կ'արմուր/կ'անթուր, չալ, սև/սը՛վ, սպիտակ/սիպտակ* բառերի ծագման նկարագիրը⁷:

Նկատելի է, որ Ղարաբաղի բարբառի գունանունների ծագման մեջ մեծ դեր ունեն հարևան լեզուներից կատարված փոխառությունները:

Ալա- կարմիր, վառ կարմիր: Հիմք ընդունելով իմաստային և հնչյունական կազմի (բարբառում *ա-ի* ավելացումով) նույնու-

⁶ **А. А. Сараджева**, նշվ. աշխ., էջ 190:

⁷ Տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», Եր., 2001-2002 թթ., հ. I, էջ 81:

⁸ Տե՛ս **Ա. Ա. Գրիգորյան**, նշվ. աշխ.:

թյունը՝ կարելի է ենթադրել, որ բառը առաջացել է *ալ* գունանունից, որը, ըստ Մալխասյանի, թուրքական փոխառությունն է. «Ալ (թուրք. *al*), ած. պայծառ կարմիր»⁴:

Զմմբիրիտ - վառ կանաչ: **Զմբոխտ** բառը Աճառյանը համարում է իրանական փոխառություն. «Նախնատր ձևն է *զմմոռոխտ*, որ, ըստ իս, ծագած պետք է լինի պիլ. գու. *zumarruft* ձևից»⁵:

Զմռ - դեղին, ոսկեգույն: Աճառյանի արմատական բառարանում կա *զանէկ* բառը, որի ծագումը լեզվաբանը կապում է պր. *zar* (ոսկի) բառի հետ: **Զառ** բառի ծագումը նույն ձևով է բացատրում Մալխասյանը¹⁰:

Ոսկեթել, ոսկեթել գործվածք, ոսկյա Աշանակություններով բառը կա հայերենի բացատրական բառարաններում: Այսպիսով՝ *զմռ* գունանվան ծագումը պետք է կապել պարսկերեն *zar* բառի հետ:

Զարդահ - դեղին, ոսկեգույն: Աճառյանը *զարտակ*՝ դեղին, դեղնագույն (հանդիպում է նաև *զերտակ* ձևով) համարում է իրանական փոխառություն. «պիլ. *zartak*, պր. *zardak* և *zarda*»¹¹: Ջաֆուկյանը զարտակ բառը համարում է խոսակցական լեզվին բնորոշ¹²: Այս ամենը վկայում է *զարդահ* բառի իրանական ծագման մասին:

Թոխ-թոխ: Ըստ Սարաջևայի՝ բնիկ հայերեն բառ է՝ հ. ն. *teugultousgultusgu* (մթնել, սևանալ) արմատից¹³: Թե՛ գրական հայերենում, թե՛ բարբառում բառը պահպանել է սկզբնական նշանակությունը որպես ածական՝ սև, շագանակագույն:

Խակի - դեղնականաչավուն: Ըստ Մալխասյանի՝ ծագում է պր. *haki* (հողա-

յին) բառից¹⁴: Բարբառում այն միայն գունանուն է, իսկ գրական հայերենում ունի այլ իմաստներ:

Մրթէն - մութ (գույների մասին): Այս բառի ծագումը ևս Սարաջևան կապում է հնդեվրոպական արմատի հետ¹⁵ *meut* (մութ, պղտոր): Բարբառում *մութ* բառից - էն ածանցի միջոցով կազմվել է *մրթէն* գունանունը:

Մրրոց - կանաչ, վառ կանաչ: Կազմված է *մորոտ* բառից, որը բուսանուն է. «պիլ. *murt*, որի հետ նույնն են պր. *murd*, գերմ. *murte*, ռուս. *мурта*, և բոլորն էլ նույն նշանակությամբ»¹⁶: Բառը նույն նշանակությամբ կա հայերենի բոլոր բացատրական բառարաններում, Մալխասյանը ևս կապում է պր. *murd* բառի հետ¹⁷:

Մօք - մուգ: Հնդեվրոպական (*smekh-*, *smoug-* (ծխել, ծուխ) արմատից առաջացել է հայերենի *մուգ* (Ղարաբաղի բարբառում *մօք*) բառը¹⁸:

Շահմար - կարմիր (օձերի մասին): Մալխասյանը համարում է իրանական փոխառություն՝ *sah* (թագավոր), *mar* (օձ)¹⁹:

Շարմաղ - սպիտակ և փափուկ: Բառի ծագման մասին կա Աճառյանի գավառական բառարանում. «Ըստ փբ. կազմուած է *շար* «շղարշ, թիգ» բառէն - հետևաբար գործ չունի արաբ և քրդ. *sar* (մազ) բառի հետ»²⁰:

Սարխօշ - շիկավուն: Ըստ Մալխասյանի՝ ծագում է պր. *sarxos* բառից²¹:

Սրէվ սիրէկ - շատ սև: **Սիրէկ** բառը բարբառում ունի երկու իմաստ՝ 1. կաշվե կտոր, որը իբրև կափարիչ կապում են խնոցու և այլ ամանների բերանին, 2. փխբ. շատ

⁴ Ստ. Մալխասեան, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Եր., 1945, էջ 15:

⁵ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 101:

¹⁰ Տե՛ս Ստ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 9:

¹¹ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 84:

¹² Տե՛ս Գ. Բ. Джаукян, А. А. Сараджева, Ц. Р. Арутюнян, նշվ. աշխ., էջ 553:

¹³ Տե՛ս А. А. Сараджева, նշվ. աշխ., էջ 189:

¹⁴ Տե՛ս Ստ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 230:

¹⁵ Տե՛ս А. А. Сараджева, նշվ. աշխ., էջ 188:

¹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 364:

¹⁷ Տե՛ս Ստ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 377:

¹⁸ Տե՛ս А. А. Сараджева, նշվ. աշխ., էջ 188:

¹⁹ Տե՛ս Ստ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 494:

²⁰ Հր. Աճառեան, Հայերեն գավառական բառարան, 1913, էջ 824:

²¹ Տե՛ս Ստ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 193:

բարակ: Առաջին իմաստով բառը գրական հայերենում կա *սարեկ* ձևով²²: Մեր կարծիքով *սիրեկ* բառը նշված իմաստներով որևէ կապ չունի գունանվան հետ: Հայերենի գրեթե բոլոր բառարաններում նշվում է սարյակ թռչնանունը, իսկ *սարեկը* և *սարիկը* հղվում են առաջինին՝ որպես *սարյակ*-ի արտասանական և գրային տարբերակներ: Ըստ Ջ. Գրեյինի՝ *սարեկը* և *սարիկը* տարբեր թռչուններ են. *սարիկը* վարդագույն սարյակն է, որը փոխառված է իրանականից (*sar, sari*՝ սարյակ), իսկ *սարեկը*՝ սև

սարյակ նշանակությամբ, ուղղակիորեն ժառանգված է հնդեվրոպական լեզվից²³: Կարելի է ասել, որ հենց *սարեկն* է հնչյունափոխվելով դարձել *սիրեկ*՝ *սը՛վ սիրեկ* գունանվան մեջ (հմմտ. *սարեկ/սիրեկ* (կաշվե կտոր), *ավել/իվիլ*, *բան/պիճ*):

Բարբառը ունի նաև անհայտ ծագման գունանուններ՝ *աբի*, *դավահիցի*, *զիզի-բի-զի*, *թնտ*, *ճաղար*, *սարու* և այլն:

*Ա. ՅՈՒ. ՍՈՐՉԱՅԱՆ,
Ը. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ*

²² Տե՛ս նույն տեղը, էջ 192:

²³ Տե՛ս Լ. Հովսեփյան, Ն. Սիմոնյան, J. Greppin, Classical and Middle Armenian Bird Names, New York, 1978, «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 2, էջ 219: